

ՎՐԹԱՆԻՍ՝ ՓԱՓԱՋՅԱՆԸ ԴՐԱՔՆՆԱԴԱՏ

1. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Վրթ. Փափաղյանի գրական-բնագատական հայացքները գրանորվել են նրա հոդվածներում, գրախոսություններում, գրականության և մշակույթի ամսագրի Բնագատներին նվիրված ուսումնասիրություններում, ինչպես նաև նամակներում:

Փափաղյանի գրականագիտական հայացքները ձևավորվեցին ժամանակի հայ իրականության առաջադրած հարցերի լուծում՝ սերտ կապված լինելով 30-ական թթ. արդեն լրիվ ձևավորված հայ ուսուցողական բնագատության գեմեղման ուղղության հետ:

Հարթ և անսխալ շերտ Փափաղյան-բնագատի ուղին: Եղև են հակասական ու ծայրահեղ կարծիքներ, հաճախ հեղինակի համար անտեսանելի է մնացել գրական երևույթների կապը հասարակական-քաղաքական միջավայրի հետ: Սակայն մի բան ակնհայտ է. հեղինակն ունեցել է որոշակի գրական աշխարհայացք և գեղագիտական հայացք, որոնց շնորհիվ նրա բնագատական ժառանգությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Դրականության մեջ ունիվերսիտետական մեթոդի հաստատման հետ մեկտեղ ՏԻՄ դարավերջի բնագատությունը առաջ էր քաշում նաև հայ գրականության ապագայի, նրա առաջընթացի, զարգացման առանձնահատկությունների խնդիրները, որոնք բնականոն հետևանքն էին ազդի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերի:

Բնագատներին հատկապես հուզում էր հայ ազդի երկու հատվածների գրական շարժման մերձեցման հարցը: Եվ արեմատայ, և արևելահայ մամուլում տպագրվող հոդվածներում հեղինակները ուղղորդում էին հրավերում այն բանի վրա, թե որքան անհրաժեշտ է ավելի լավ ճանաչել միմյանց գրական-մշակութային կյանքը, ստեղծել բարենպաստ պայմաններ հիմնականում ընդհանուր օրինալատությանը զարգացող երկու գրականությունները նույն նպատակին ծառայեցնելու համար: Իրեն առաջնահերթ խնդիր, արժարժվում էր միասնական լեզվի ստեղծման հրաժեշտությունը: Ըստ Դրիդոր Արծրունու, այդ լեզվի ապագան կապվում էր արևելահայ լեզվի զարգացման հետ: Կային նաև դարձարի մոլի պաշտպաններ, որոնք փորձում էին նոր բովանդակություն ունեցող գրականությունը հարմարեցնել իր դարն ապրած լեզվին:

Փափաղյանը յուրովի արձագանքեց հայ գրականության զարգացման առաջնությունը հարցին: Ղեկն իր անդրանիկ դարձնող գրականագիտական հոդվածներով, որոնք տպագրվեցին Զմյուռնայի «Արևել-յան մամուլ» ամսագրի էջերում:

«Մի որևէ ազդի լեզվից անմիջական կախումն ունի նորա գրականությունը»,— գրում է երիտասարդ բնագատը: Լեզվի և գրականության փոխադարձ կապի մեջ տեսնելով գրականության առաջընթացի գրականը, նա հայ գրականության համար շարիք էր համարում գրական լեզվի երկփակվածությունը: Նշելով, որ ե՛ր արեմատայ, ե՛ր արևելահայ լեզուների ակունքը եղև է գրաբարը, որի հետևանքով և նրանք ունեն շատ ընդհանրություններ, Փափաղյանն առաջարկում է «երկու գրական լեզուները վերածել ի մի և մի կանոնավոր աշխարհարար լեզու կազմակերպել»²:

Այդ խնդրի լուծման համար նա կոչ է անում ստեղծել ազդի մշակույթի բարձր պահանջները բավարարող միասնական գրական լեզու:

Միասնական լեզվի կազմավորման խնդրի հետ միասին, Փափաղյանը ազդի երկու հատվածների մերձեցման կարևոր դրժոն է համարում նաև միմյանց գրական արժեքների ճանաչումն ու հիշատակումը: Հակառակ իր ժամանակի որոշ բնագատներին, նա ամենևին էլ հակված չէր վերահայտնելու երկու հատվածներից որևէ մեկի ստեղծած արժեքները: Տարբեր ժամանակներում գրված հոդվածներում, զասախոսություններում համակողմանի ձևով քննվում են ազդի երկու հատվածների բաժանման հասարակական-քաղաքական պատճառները, ցույց են տրվում ոչ միայն

1 «Արևելյան մամուլ», 1886, 1887, 1888 թթ.:

2 Վրթ. Փափաղյանի գրականության մասին», հոդվածների և նամակների ժողովածու, կազմեց Ռ. Նանուժյանը, Երևան, 1962, էջ 17:

ներանց միջև եղած տարբերությունները, այլև այն խոր ընդհանրությունները, որոնցով բնորոշվում է պետության ղեկավարի բերումով անջատված, բայց հենց ինչպես ազգային մշակույթի և պետության միասնականության արտահայտությունը։ Առաջ երկու հատվածների մերձեցման և փոխադարձ ճանաչման նպատակով հանդիպում ենք ժողովրդական և ֆեոդալական հատկանիշները Պոլսի Քրիստոսական գիտնական Պրանց տառիկին էին ծառայում նաև Փափազյանի հոգևածնները Պոլսի Քրիստոսական գիտնական Պրանց տառիկին էին ծառայում նաև արևելահայ գրական շարժման հետ կապված կենսական մեծ ընթացքներ, առանձնապես Ռեալիզմի խնդրում, որն ուղղակիորեն առաջադրում էր գրականության բովանդակության ժողովրդականացման պահանջը։

ՏՕ-ական թթ. համարելով արևմտահայ գրականության վերածնության տարիներ, Փափազյանը համակրանքով է հիշում այնպիսի ժողովրդագրի գրիչներին՝ երևան գալը, ինչպիսիք էին Զոհրապը, Արփիարյանը, Բաշալյանը, Կամսարականը։ Այս անունները պատահական չէին։ Նրանց ստեղծագործության արևմտահայ գրական շարժման մեջ նշանավորվեց Ռեալիզմի հաղթանակը։ Ռեալիզմը արևմտահայ գրական կյանքում հեղաշրջող դեր ունեցավ։ Անցյալի փառքի ռոմանտիկական հուշերին, ազգայնական գաղափարներին փոխարինելու եկավ, ժողովրդի հուշերն ու հոգսերը արտացոլող գրականությունը։ Փափազյանի համոզմամբ դա մի ժամանակ էր, երբ ազգայնամոլության համար զոհված գեղարվեստականությանը հաջորդում էր մի ողջամիտ և համակրելի իրապաշտական ուղղություն, իր նոր, ժողովրդասեր գաղափարներով և գեղարվեստի համար ունեցած մեծ պաշտամունքով։

Քննադատը հատուկ ուշադրություն է դարձնում նաև գրականության բովանդակության յուրօրինակությանը։ Գիտելով այն իրերն ու ուղղություններն, որոնք առանձնահատկություններն ունենում էին, նրանք կարող էին պատկերվել իր տարբեր կողմերով, սակայն գերազանցել է համարվում հատկապես որոշակի ուշադրության բեռնումը դեպի «ժողովրդագր», նրա վարքն ու բարքը, նրա վիշտն ու ցավը, ապա և զավառը, Պոլսի գոհներում տառապող հազարավոր պանդուխտները։

Պաշտպանելով Ռեալիստական գրականության առաջընթացը, ապացուցելու համար նրա կենսականությունն ու գոյատևելու իրավունքը՝ իրեն գրական շարժման միակ ճշմարիտ ուղի, Փափազյանը երբեմն հիշատակում էր անցյալի գրականությունը՝ նորին հակադրելով։ Սա ամենին էլ չի նշանակում, թե քննադատը թերազնաբանական էր անցյալի արժեքները։ Նա ռոմանտիկականը հակադրում էր Ռեալիստականին ոչ թե առաջինն արժեքազրկելու միտքով, այլ մի անգամ ևս հաստատելու համար ժամանակի պատմա-հասարակական հանգամանքների կյանքի կոչված նոր ուղղության իրավունքները։ Ռեալիզմի պաշտպանությունը բխում է քննադատի գրականագիտական սկզբունքներից։

Ռեալիզմ և ժողովրդականություն հասկացողությունները Փափազյանի գրականագիտական հայացքներում մի միասնություն են կազմում, դառնում չափանիշ այս կամ այն գեղարվեստական ստեղծագործությունն արժեքավորելու համար։

Ո՞րն է գրականության դերը ազգի հասարակական-քաղաքական կյանքում։ Ո՞ւմ համար է ստեղծագործում գրողը։ Ամենաառաջին հարցը մեր վիպասանի կամ բանաստեղծի համար այն է, որ ժողովրդից կարգա և հասկանա իրեն։ Վիպասանի կամ բանաստեղծի պարծանքն է, երբ ժողովրդից կարգում է նրա գրվածքները, ըմբռնում, օգտվում է նրանից, կրթվում, զարգանում և երբ նրա գրքերը թափանցում են գյուղերն իսկ ու սիրելի դառնում ո՛չ թե հարուստների, այլ բուն ժողովրդյան, վիպասանի ասելիքներին կարող գյուղացուն, տղետ, բայց լույս փնտրող ամբողջ ժողովրդին։ Այդ առումով՝ Փափազյանը բարձր է գնահատում հայ գյուղագիրների գործերը՝ ճուշտության չափանիշով աշխարհը, Ազգայանի, Ազնվյանի և մյուսների ստեղծագործությունները։ Դրանց արժեքը գիտվում է դեմոկրատական գաղափարների արտահայտման, գյուղական կյանքի նյութները հարազատորեն և, որ կարևոր է, պարզ, մատչելի լեզվով արտացոլելու մեջ։ Սակայն լեզվի մասին խոսելիս, քննադատը զգուշացնում է գրողներին՝ չընկնելու հակառակ ծայրահեղության մեջ, քանի որ անպաճուճությունը կարող է տանել մինչև լեզվի աղքատացում, որը նկատելի է որոշ արևելահայ գրողների մոտ։ Մյուս կողմից, Փափազյանը ժողովրդային ստեղծագործությանը անհարկ է գտնում բռնամտությունն ու մտամոլությունը, որոնք բառերի անօգուտ հեղեղներով մթնացնում են ու անըմբռնելի դարձնում ասելիքները։

Փափազյանը, սակայն, գրողին սոսկ պատիվ հայեցողի և պատճենահանողի դեր չէր վերադրում, քանի որ գրականության նյութ է դառնում ոչ միայն «ժողովրդի կյանքը, նրա վատ ու

3 Քրիստոսական գիտնական, Պոլս, 1899, 750, 797, 821, 828, 845, 873;

4 Քերթ. Փափազյանը գրականության մասին, էջ 150;

5 Նույն տեղում, էջ 61:

լավ կողմերը, այլև տեղի զարգացնող միջոցները, քաղաքակրթությունից չխորշելու, ազնիվ գրագետներով ղեկավարվելու նորգործերը»⁶։

Այսպիսով, քննադատը հասնում էր դրականության արժեքի հասարակական գերի ըմբռնմանը. արվեստը ծառայում է ժողովրդին, հասարակությանը։ Արտացոլելով կյանքը և բարձրացնելով իրականությունը հուզող հարցեր, իսկական տրվեստի ստեղծագործությունը կարող է փոխադրել իրականությունը փափազյանը արվեստին, մասնավորապես դրականությանը, վերադառնալով նաև կրթողի, բարոյապես դաստիարակողի դերը։ Քննադատն իր հայացքներով ամբողջությամբ հակադրվում է բարվեստն արվեստի նամար՝ կեղծ տեսությանը և էսթետիզմի կողմնակիցներին, որոնք արվեստի մեջ փնտրում էին միայն գեղեցիկը, բարձրը. հաճույքի մոմենտը՝ դերադնահատելով իրականության դառը պատկերներին։ «Մենք չենք սիրում գեղարվեստը՝ լուրջ գեղարվեստի համար, — ասում է նա, — մենք սիրում ենք գեղարվեստը ծառայեցնել մեզ շրջապատողներին, մեր խոսքին կարոտ, մեր խրատներին ու նորգործներին փափազող ժողովրդյան. և բառերն ու մտքերը, որոնք կուղեք խրթին կամ նրբին դարձրեք, եթե նոքա չեն ծառայում որևէ լավ ու բարի նպատակի, եթե նոքա չեն արտահայտում, կամ չեն ներշնչում որևէ բարի բան — նրանք մեզ համար ո՛չ միայն անընդունել են, այլ հաճախ իսկ պոռոտախոսական»⁷։

Դրականության հասարակական դերի հարցը բարձրացվել է տարբեր ժամանակներում, տարբեր դրական ուղղության հարող գրողների ու քննադատների կողմից, կրելով իր մեջ ժամանակի և սովյալ ուղղության համապատասխան որոշակի պահանջներ։ Ռեալիստական դրականությանը ներկայացված հասարակական դերի պահանջը իր բովանդակությամբ համահունչում էր ռեալիզմի գեղագիտությանն ու ժամանակի պատմական պայմաններին։ Կյանքի նետ դրականության սերոն կապը, իրականության և արվեստի փոխհարաբերության նոր ըմբռնումը դրական ստեղծագործություններին հաղորդել էին ոչ միայն նոր բովանդակություն, այլև նոր նպատակներ էին դրել նրանց առաջ։ Պայքար հանուն ժողովրդի կյանքի լավագույն պայմանների ստեղծման, սոցիալական հակասությունների վերացման, ազգի կուլտուրական մակարդակի բարձրացման՝ այսպիսի խնդիրներ էին առաջադրում մեր լավագույն ռեալիստ գրողները։

Դրականությունը շարունակում էր հայ իրականության մեջ կատարել որոշակի առաքելություն՝ ազդի ինքնադիտակցության բարձրացման, նրան եվրոպական ազգերի կուլտուրական մակարդակին հասցնելու ուղղությամբ։ Արվեստը, մասնավորապես դրականությունը, լինելով հասարակական-պատմական կյանքի արտացոլումը, իր մեջ ուժեր էր կուտակում ամբողջ մի ժողովրդի ապագա ճակատագրի կրելու համար։ Այս իրողությունը նկատի ունենալով, սոցիալական կրթում էր ուժի ազդ ապրում է իր դրականությունով ու արվեստով, նա կենսունակ է միայն դրանով, դրանց մահը նշանակում է ազգի մահը»⁸։

Դրականության հասարակական դերի խնդիրները քննադատը արժաթուղի էր նաև դրողներին կոչման հարցին անդրադառնալիս։

«Արշալույս» թերթում տպված «Հայ գրողներին» վերնագրով հոդվածը իրոք մի կողմ էր ուղղված հայ բանաստեղծներին և գրողներին՝ միավորվելու ու ստեղծելու մի կազմակերպություն, որն անպայման մեծ չափով նպաստելու էր հայ դրականության զարգացման ընթացքին։ Բարձրացված հարցը նոր չէր։ Դրողների միավորումը ստեղծելու մասին խոսվել էր դեռևս 90-ական թթ.։ Մեր դրականություն հոգևորով ապրող այնպիսի մի հեղինակ, ինչպիսին Հովհ. Թումանյանն էր, ամբողջ սրությամբ պայքարում էր հարցի կարևորությունը, ինքը ձեռնամուխ եղավ այդ զործին, և 1899 թ. կազմակերպվեց «Վերնատունը», որի ղեկը գլխավոր էր դերադնահատել ոչ միայն այդ շրջանի հայ դրականության, այլև հայ մշակույթի կյանքում։ Սակայն խոսքը վերաբերում էր մի կազմակերպության, որն ընդգրկեր ավելի մեծ չափեր և ունենար դործունեության ավելի մեծ հնարավորություններ։

Չնայած իր աշխարհայացքով և դաշափարական համոզմունքներով փափազյանը հեռու էր պրոլետարիատի դասակարգային գերբերից և հեղափոխության բուն պայքարի ըմբռնումից, բայց դա չխանդարեց նրան արձագանքելու հեղափոխությանը։ Դեռ ավելին, այդ հեղափոխության մեջ տեսնելով ժողովրդի ազատագրության միակ հնարավորությունը, նա կոչ էր անում գրողներին՝ ձախճվելու և իրենց մասնակցությունը բերելու բռնական կամ մանկակից ազատական շարժումներ։

⁶ Նույն տեղում։

⁷ Նույն տեղում, էջ 61—62։

⁸ ԴԱԻ, Փափազյանի ֆոնդ, Մ 39, Առաջաբան հայ դրականության պատմության։

րենս: Փափազյանը զտնում է, որ հենց այդ իրադրության մեջ, երբ «շուրջը» արյուն է հոսում⁹, դրոշմ իրավունք չունի հեռու և անտարբեր մնալու¹⁰:

Գրողն իր ազդի առաջընթացի համար պայքարելիս ուղի է բացում նաև ուրիշ ազդերի զարգացման համար: Համաշխարհային դրականության նշանավոր ներկայացուցիչները իրենց ստեղծագործություններում արտահայտելով յուրաքանչյուրն իր ազդի, իր ժողովրդի ձգտումներն ու իդեները, միաժամանակ խոշոր ներդրում են կատարում համամարդկային առաջընթացի գործում:

Փափազյանը գրականությանը միայն դաստիարակիչ դեր չէր վերապահում: Գրողները, բացի իրենց ստեղծագործությունները ժողովրդի պայքարի գործին նվիրաբերելուց, «պարտավոր են և գործի մեջ շանալ հառաջընթաց դառնալու»:

Քննադատը գրողների առաջ դնում է բարձր քաղաքացիականության պահանջ: «Գրողը, որ կարապետն է եղել հեղափոխությունների, չի կարող ուրեմն լուռ և անտարբեր մնալ, երբ գրչի մարդ լինելուց հետո, պիտի մեջ նետվել և միասնալ իր փայփայած: իր քարոզած մտքերի համար կոմունիստներն ու պահանջ դնողներին»¹⁰:

Գրող-քաղաքացի լինելու պահանջն առաջադրելով, Փափազյանը դրանով իսկ բացառում է որևէ շափի շեղծությունը գրականության մեջ: Իսկական ժողովրդային գրականությունը չի կարող դեգերել վերացական գեղեցկի ոլորտներում: Ինքը՝ Փափազյանը, ապացուցում է այդ ճշմարտությունը և՛ իր գրական, և՛ քննադատական գործունեությամբ: Դեմոկրատ գրողին հուզում էր ժողովրդի իրական վիճակը, նրա ապագան: Իր հրապարակախոսական և քննադատական հոգվածներում նա արժարժում է ոչ միայն ժողովրդի սոցիալական վիճակի հետ կապված հարցեր, այլև բարձրացնում է քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ:

Իր քննադատության մեջ ղեկավարվելով հայ գրականության ներկայի և, որ կարևորն է, ապագայի մտահոգությամբ, Փափազյանը ոչ միայն վեր է հանում գրական շարժման հոռի կողմերը, այլև դրվատում է այն լավն ու արժեքավորը, որ նախանշում էր գրականության վաղվա օրը:

«Ղարաբաղ» թերթում հանդես գալով «Գրական ակնարկներ» հոդվածաշարով, քննադատը ընդհանրացնելով ժամանակի գրական շարժման պատկերը, առանձնակի տեղ է տալիս այնպիսի գրողների ստեղծագործություններին, ինչպիսիք էին Նար-Դոսը, Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, Հովհ. Թումանյանը: Այս գրողների գործերը դիտվում են իրեն ապագայի կենսունակ գրականության նմուշներ: Քննադատը հատկապես մանրամասն է վերլուծում Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները: Լինելով մեծ բանաստեղծի գործի առաջին արժեքավորողներից մեկը, Փափազյանը, շնորհիվ իր նուրբ ճաշակի կարողացավ ճիշտ գնահատել բանաստեղծի ստեղծագործությունները և կանխորոշել նրա տեղը գրականության պատմության մեջ:

Թեև քննադատի խոսքը նշված հոդվածում վերաբերում է «Արու-Լալա-Մահարի» պոեմին, սակայն մինչև բուն նյութին անցնելը, նա մի քանի խոսքով բնութագրում է հեղինակին, իրեն ճանաչող ներքինը, ժողովրդական բանաստեղծի՝ «որ հայ նորագույն գրականությունն է հարստացրել իր փոթորկող ոգու, իր զգայուն սրտի տրտունջներովն ու մրմունջներովը, ըմբոստացող իր զգացմունքներով, տենդոտ վարանումներով և քնարական թախծոտ երգերով»¹¹: Բանաստեղծի ստեղծագործության մեջ, ըստ Փափազյանի, տարբերվում են մի քանի փուլեր, մուտքը՝ երազներով ու տոգորումներով լեցուն՝ ապա՝ գաղը հիասթափություն և մորմոքի երգեր, դրան հաջորդող ըմբոստության, բռնուն վրդովումների՝ ջրջան, որից հետո «գառնացած բանաստեղծն ընկնում է փիլիսոփայական մի դրության մեջ, համակվում է անհատականության և անիշխանության ոգով, որոնում է անապատը, մենակությունը...»:

Ինչպես տեսնում ենք, Փափազյանը հիմնականում ճիշտ է բնութագրում բանաստեղծի ստեղծագործական անցումները: Սակայն ակնհայտ է և վրիպումը: Փափազյանը նույնացնում է Իսահակյանի Արու-Լալա-Մահարու հեռացումը բուրժուական իրականությունից՝ Նիցշեի փախուստի հետ՝ մարդկանցից դեպի գազաններ: Անշուշտ, Իսահակյանի սիմվոլիզմը կրել է որոշ ազդեցություն Նիցշեի փիլիսոփայությունից: Երիտասարդ բանաստեղծի հիասթափությունը բուրժուական աշխարհից, նրա այլանդակ բարձրից, ձգտումը դեպի մենություն ու անապատի մաքրությունը, կարող էր համահնչուն լինել Նիցշեական աղաղակին: «Մի գնա մարդկանց մոտ, այլ ավելի շուտ գնա անապատ, գազանների մոտ»:¹² Սակայն հենց նույն տեղում էլ կրելու է բանաստեղծի ձյուտում-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 135:

Ներքև տարբերությունները Արտու-Վալա-Մանարին տեսնում է անապատի միջով դեպի արևելք, լույսը, այնինչև նիդրենի հերոսը վերադառնում է դեպի գաղանձերով լի անապատը, որ իշխում են վայրենի բուսղոն ու կենդանական կրթերը: Վրիպումը պատահական չէր, այն գաղտնի էր հեղինակի աշխարհայացքային հակասություններից: Չնայած դրան, Փափաղանյունի հաղովվել է Տիշտ դեմահատին հասնականի ստեղծագործությունը և վեր հանելով գործի զեղարվածության բարձր արժանիքները, դասելով, այն նույնաշխարհային գրականության գանձերի շարքում:

Առանձնա՝հատուկ ջրամուկյուն եւ անկեղծ Համակրանք էր տաժում Փափագլանը դեպի Հովհ. Թումանյանն ու նրա ստեղծագործությունը: Թեև նա Հանդես չի եկել Թումանյանի մասին առանձին հոդվածով, սակայն տարբեր առիթներով նրա Հայտնած կարծիքները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել բննադատի վերաբերմունքի մասին դեպի Հայ մեծ բանաստեղծը:

Քննադատին Քումանյանի հետ կապում էր ոչ միայն բանաստեղծի գործերի նկատմամբ ունեցած բարձր կարծիքը, այլև փոխադարձ բարեկամությունն ու տարիների համագործակցությունը՝ դրական կյանքում: «Հայ գրողներ» քրեստումատիայի երկու հատորների վրա տալով աշխատանքը, «Վերնատան» հավաքովիներ, Փափազյանի խմբագրած «Վտակ» ժողովածուին Քումանյանի մասնակցությունը և շատ առիթներ, այնիչ ևս ամրապնդել կապը հայ դրականության երկու գործիչների միջև՝ նրանց նամակագրությունը պարզ երևում է, թե ինչպիսի հոգատարությամբ և բուռն հետաքրքրությամբ էր Փափազյանը հետևում բանաստեղծի յուրաքանչյուր քայլին: Նա հիացմունքով և ցերմ զրկատանքով էր ընդունում Քումանյանի ամեն մի նոր գործը, խոր համոզմամբ նրան համարելով՝ կռվկասահայոց առաջին բանաստեղծը: «Վտակին» ուղարկած «Պոետն ու մուսան» պոեմի մասին հեղինակին ուղղված նամակում կարգում ենք. «Է՛հեղեղեք անսփոփոխ, սառնաց մի լառ իսկ փոխելու տպագրել, որովհետև նրա մեն չկա ոչինչ, որ զմեռ լինի մեր ուղղությամբ և որ կարելի լինի չնջել... Պոեմադ բոլորիս վրա շատ լավ տպավորություն թողեց»:

Իր Հողովածներում քննադատոր Բաղմիցս անդրադարձել է նաև բուրժուական իրականության և դրոյի փոխհարարերությանը, որի Հետ սերտորեն առնչվում էր և մամուլի խնդիրը: Խոշոր նշանակություն տալով մամուլի Հասարակական գերին, Փափազյանն անհանդուրժելի է Համա-րում բուրժուական մամուլի բարբերը: Տարբեր առիթներով խոսելով մամուլի մասին, նա ասելն էր՝ խոստանալով, իր բուրժուական դրսեկներով ծախու էլուծելու և դրավածում դեմհատական թերթերի աշխատանքը, իր բուրժուական էլ մարքսիստական նոր խոսքը թերթի նրա դանհատում, որի խմբա-դիր էր Սա. Շահումյանը: Փափազյանը թերթը դիտում է իրեն լայնադուրնը՝ Ժամանակի պար-բերականներին: «Նոր խոսքը» շատ կողմերով Հողհհարադատ էր քննադատի դատողություններին, ինն վերջինն մարքսիստ չէր: Ուղղամիտ դեմոկրատ գրողին դուր էն գալիս թերթի թարմաշունը, լրջախ թղթակցությունները, անհաշա պայքարող ուղին: Այն թիվ կարգալու և խորհրդածելու նյութեր է տալիս, ե՛ր ին մանավանդ, հակառակ մի քանի ոսկու քակների առաջ գետնարարը սողոսող էր թերթին, դիտել ձաղկել այն սղնախղղներին, որոնք իրենց-իրենց սրտացավա խնամա-կալիքի են: Շուկվում Հույ աշխատավորի համար, սակայն ոչ այլ ինչ են եթե ոչ՝ կամ հարստա-նորդների գծով սպառողներին և կամ նոր սկսող կեղերիչները: 12:

Ճիշդ զնաճատումների կողքին այստեղ ևս Փափաղյանը թույլ է տալիս վրիպում, հոսելով նրա, Կարինյանի հօծեր արևմտաճայ գրականությունից: Հողվածի մասին, բննադատը հակա-դրվում է Կարինյանի այն կարծիքին, թե Ջոհրապը «անկեղծ տանքանքով է դիտում ժամանա-կակից... զստակարգային ներահղությունները»: Ըստ Փափաղյանի՝ Ջոհրապը «գերազանցորեն սիրալիս այսպիսի արեկամների դրող է, որոնք իրենց մեջ ունեն գրամատիկ... գրեթե մեկողբամա-կան ղեկը»¹³: Ջոհրապի ստեղծագործության այսպիսի մեկնաբանումը անշուշտ հեռու էր իրականությունից և հեռանքի էր բննադատի աշխարհայացքային սահմանափակումների:

Փախուղյանի բնագաղափարական հոգիվածներում կարևոր տեղ է զբաղում հայ գրողների դիմա-
նկարների շարքը, որոնցով նա հանդես է եկել և՛ արևմտահայ, և՛ արևելահայ մամուլի էջերում:
Ստեղծագործական այնպիսի վերլուծականներ, ինչպիսիք են Հակոբ Պարոնյանի, Արշակ Զոհան-
յանի, Գարեգին Սուքիասյանի, Պերճ Պոլոյանի, Հազարտո Աղալանի դիմանկարները, արժեքավոր
նկարչորեն են հայ բնագաղափարական պատմության մեջ, մանավանդ որ զրանցից շատերը այդ
գրողների ստեղծագործության հետազոտման առաջին փորձերից են:

Ձևալած դրական դիմանկարների ոչ մեկ ծավալին և որոշ խուցիկությունը, ֆափաղյանը կարողացել է գտնել զորոշներից յուրաքանչյուրի ստեղծագործության բնորոշ գծերը, որոնցով նրանք նոր արժեքներ էին բերում հայ գրականությանը:

¹² Նույն տեղում, էջ 145—146:

13 նույն տեղում, է, 168,

րին՝ ֆափազյանը գտնում է, որ հենց այդ իրադրության մեջ, երբ «շուրջը արյուն է հոսում», գրողն իրավունք չունի հեռու և անտարբեր մնալու:

Գրողն իր ազգի առաջընթացի համար պայքարելիս ուղի է բացում նաև ուրիշ ազգերի զարգացման համար: Համաշխարհային գրականության նշանավոր ներկայացուցիչները իրենց ստեղծագործություններում արտահայտելով յուրաքանչյուրն իր ազգի, իր ժողովրդի ձգտումներն ու իդեները, միաժամանակ խոշոր ներգրում են կատարում համամարդկային առաջընթացի գործում:

Փափազյանը դրականությանը միայն դաստիարակիչ դեր չէր վերապահում, Գրողները, բացի իրենց ստեղծագործությունները ժողովրդի պայքարի գործին նվիրաբերելուց, պարտավոր են և գործի մեջ շահալ հառաջընթաց դառնալուն:

Քննադատը գրողների առաջ դնում է բարձր քաղաքացիականության պահանջ. «Գրողը, որ կարապետն է եղել հեղափոխությունների, չի կարող ուրեմն լուռ և անտարբեր մնալ, երբ գրչի մարդ լինելուց հետո, պիտի մեջ նետվել և միանալ իր փափայած, իր քարոզած մտքերի համար կռիվներին ու պահանջ դնողներին»¹⁰:

Գրող-քաղաքացի լինելու պահանջն առաջադրելով, Փափազյանը դրանով իսկ բացառում է որևէ չափի չեզոքությունը գրականության մեջ: Իսկական ժողովրդային գրականությունը չի կարող զեզոքել վերացական գեղեցկի ոլորտներում: Ինքը՝ Փափազյանը, ապացուցում է այդ ճշմարտությունը և՛ իր գրական, և՛ քննադատական գործունեությամբ: Դեմոկրատ գրողին հուզում էր ժողովրդի իրական վիճակը, նրա ապագան: Իր հրապարակախոսական և քննադատական հոգվածներում նա արժաբեռն է ոչ միայն ժողովրդի սոցիալական վիճակի հետ կապված հարցեր, այլև բարձրացնում է քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ:

Իր քննադատության մեջ ղեկավարվելով հայ գրականության ներկայի և, որ կարևորն է, ապագայի մտահոգությամբ, Փափազյանը ոչ միայն վեր է հանում գրական շարժման հոգի կռումները, այլև դրվատում է այն լավն ու արժեքավորը, որ նախանշում էր գրականության վաղվա օրը:

«Ղարաբաղ թերթում հանդես գալով «Գրական ակնարկներ» հոգվածաշարով, քննադատը լինողականությանը ժամանակի գրական շարժման պատկերը, առանձնակի տեղ է տալիս այնպիսի դրողների ստեղծագործություններին, ինչպիսիք էին Նար-Դոսը, Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, Հովհ. Թումանյանը: Այս գրողների գործերը գիտվում են իբրև ապագայի կենսական գրականության նմուշներ: Քննադատը հատկապես մանրամասն է վերլուծում Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները: Լինելով մեծ բանաստեղծի գործի առաջին արժեքավորողներից մեկը, Փափազյանը, շնորհիվ իր նուրբ ճաշակի կարողացավ ճիշտ գնահատել բանաստեղծի ստեղծագործությունները և կանխորոշել նրա տեղը գրականության պատմության մեջ:

Քեկ քննադատի խոսքը նշված հոգվածում վերաբերում է «Արու-Վալա-Մահարի» պոեմին, սակայն մինչև բուն նյութին անցնելը, նա մի քանի խոսքով բնութագրում է հեղինակին, իբրև քնարական երգչի, ժողովրդական բանաստեղծի՝ «որ հայ նորագույն գրականությունն է հարստացրել իր փոթորկող ոգու, իր զգայուն սրտի տրտունջներովն ու մրմունջներովը, ըմբոստացող իր զգացմունքներով, տենդոտ վարանումներով և քնարական թախծոտ երգերով»¹¹: Բանաստեղծի ստեղծագործության մեջ, ըստ Փափազյանի, տարբերվում են մի քանի փուլեր, մուտքը՝ երազներով ու տոգորումներով լեցուն՝ ապա՝ դառը հիասթափություն և մորմոքի երգեր, դրան հաջորդող ըմբոստության, բռուն վրդովումների՝ շրջան, որից հետո «գառնացած բանաստեղծն ընկնում է փիլիսոփայական մի դրության մեջ, համակվում է անհատականության և անիշխանության ոգով, որոնում է անապատը, մենակությունը...»:

Ինչպես տեսնում ենք, Փափազյանը հիմնականում ճիշտ է բնութագրում բանաստեղծի ստեղծագործական անցումները: Սակայն ակնհայտ է և վրիպում: Փափազյանը նույնացնում է Իսահակյանի Արու-Վալա-Մահարու հեռացումը բուրժուական իրականությունից՝ Նիցշեի փախուստի հետ՝ մարդկանցից դեպի գաղաններ: Անշուշտ, Իսահակյանի սիմվոլիզմը կրել է որոշ ազդեցություն Նիցշեի փիլիսոփայությունից: Երիտասարդ բանաստեղծի հիասթափությունը բուրժուական պշխարհից, նրա ալլանդակ բարքերից, ձգտումը դեպի մենություն ու անապատի մաքրությունը, կարող էր համահնչուն լինել Նիցշեական աղաղակին: «Մի գնա մարդկանց մոտ, այլ ալվելի շուտ գնա անապատ, գաղանների մոտ»: Սակայն հենց նույն տեղում էլ երևում է բանաստեղծի ձգտում-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 135:

ների տարբերությունը: Արու-Լալա-Մաչարին տեսնում է անապատի միջով դեպի արևը, լույսը. այնինչ Նիցշեի հերոսը վերադառնում է դեպի գազաններով լի անապատը, ուր իշխում են վայրենիքի բնադրն ու կենդանական կրքերը: Վրիպումը պատահական չէր, այն գալիս էր հեղինակի աշխարհայացքային հակասություններից: Չնայած դրան, Փափազյանին հաջողվել է ճիշտ գնահատել Խաչակյանի ստեղծագործությունը և վեր հանելով դործի գեղարվեստական բարձր արժանիքները, դասելու այն համաշխարհային գրականության գանձերի շարքում:

Առանձնահատուկ ջերմություն և անկեղծ համակրանք էր տաժում Փափազյանը դեպի Հովհ. Թումանյանն ու նրա ստեղծագործությունը: Թեև նա հանդես չի եկել Թումանյանի մասին առանձին հոդվածով, սակայն տարբեր առիթներով նրա հայտնած կարծիքները թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել քննադատի վերաբերմունքի մասին դեպի հայ մեծ բանաստեղծը:

Քննադատին Թումանյանի հետ կապում էր ոչ միայն բանաստեղծի գործերի նկատմամբ ունեցած բարձր կարծիքը, այլև փոխադարձ բարեկամությունն ու տարիների համագործակցությունը՝ զրական կյանքում: «Հայ դրողներ» քրեատոմատիայի երկու հատորների վրա տարված աշխատանքը, «Վերնատան» հավաքությունը, Փափազյանի խմբագրած «Վտակ» ժողովածուին Թումանյանի մասնակցությունը և շատ առիթներ, ավելի են ամրապնդել կապը հայ գրականության երկու գործիչների միջև: Նրանց նամակագրությունից պարզ երևում է, թե ինչպիսի հոգատարություն էր և բուռն հետաքրքրվածություն էր Փափազյանը հետևում բանաստեղծի յուրաքանչյուր քայլին: Նա հիացմունքով և ջերմ դրվատանքով էր ընդունում Թումանյանի ամեն մի նոր գործը, խոր համոզմամբ նրան համարելով «կովկասահայոց առաջին բանաստեղծը»: «Վտակին» ուղարկած «Պոեմն ու մուսան» պոեմի մասին հեղինակին ուղղված նամակում կարդում ենք. «Վճռեցինք անփոփոխ, առանց մի բառ խկ փոխելու տպագրել, որովհետև նրա մեջ չկա ոչինչ, որ դեմ լինի մեր ուղղության և որ կարելի լինի շեղել... Պոեմադ բոլորիս վրա շատ լավ տպավորություն թողեց»:

Իր հոգվածներում քննադատը բազմիցս անդրադարձել է նաև բուրժուական իրականության և գրողի փոխադարձությունը, որի հետ սերտորեն առնչվում էր և մամուլի խնդիրը: Խոշոր նշանակություն տալով մամուլի հասարակական դերին, Փափազյանն անհանդուրժելի է համարում բուրժուական մամուլի բարքերը: Տարբեր առիթներով խոսելով մամուլի մասին, նա անխնայ մերկացնում է բուրժուական գրչական ծախս էությունը և դրվատում դեմոկրատական թերթերի աշխատանքը: Արժեքավոր է մարքսիստական «նոր խոսք» թերթի նրա գնահատումը, որի խմբագիրն էր Ստ. Շահումյանը: Փափազյանը թերթը գիտում է իրեն «լավագույնը» ժամանակի պարբերականներից: Նոր խոսքը շատ կողմնորոշ հոգեհարազատ էր քննադատի դատողություններին, թեև վերջինս մարքսիստ չէր: Ուղղամիտ դեմոկրատ գրողին դուր են գալիս թերթի թարմաշունչ, լրջմիտ թղթակցությունները, անհաշտ պայքարող ոգին: Այն «թե կարդալու և խորհողածելու նյութեր է տալիս, և՛ թե մանավանդ, հակառակ մի քանի ոսկու քսակների առաջ գետնաքարը սողոսկող թերթերի, գիտե՞՞ ձաղկել այն պնակալեզներին, որոնք իրենք-իրենց սրտացավ՝ խնամականեր են» հուշակում հայ աշխատավորի համար, սակայն ոչ այլ ինչ են եթե ոչ՝ կամ հարստահարողների գծած սպասավորներ և կամ նոր սկսող կեղծքիչներ¹²:

Ճիշտ գնահատումների կողքին այստեղ ևս Փափազյանը թույլ է տալիս վրիպում: Խոսելով Արտ. Կարինյանի «Գծեր արևմտահայ գրականությունից» հոդվածի մասին, քննադատը հակադրվում է Կարինյանի այն կարծիքին, թե Չոհրապետ Բանկեղծ տանջանքով է դիտում ժամանակակից... դասակարգային ներհակությունները: Ըստ Փափազյանի՝ Չոհրապետ «գերազանցորեն սիրային այնպիսի արկածների գրող է, որոնք իրենց մեջ ունեն դրամատիկ... գրեթե մեղուրամական գծեր»¹³: Չոհրապետ ստեղծագործության այսպիսի մեկնաբանումը անշուշտ հեռու էր իրականությունից և հետևանք էր քննադատի աշխարհայացքային սահմանափակության:

Փափազյանի քննադատական հոդվածներում կարևոր տեղ է զբաղում հայ գրողների դիմա-նկարների շարքը, որոնցով նա հանդես է եկել և՛ արևմտահայ, և՛ արևելահայ մամուլի էջերում: Ստեղծագործական այնպիսի վերլուծականներ, ինչպիսիք են Հակոբ Պարոնյանի, Արշակ Զոպանյանի, Գարրիկ Սունդուկյանի, Պերճ Պոռչյանի, Ղազարոս Աղայանի դիմանկարները, արժեքավոր ներդրումներ են հայ քննադատության պատմության մեջ, մանավանդ որ դրանցից շատերը այդ գրողների ստեղծագործության հետազոտման առաջին փորձերից են:

Չնայած գրական դիմանկարների ոչ մեծ ծավալին և որոշ թուուցիկությանը, Փափազյանը կարողացել է գտնել գրողներից յուրաքանչյուրի ստեղծագործության բնորոշ գծերը, որոնցով նրանք նոր արժեքներ էին բերում հայ գրականությանը:

¹² Նույն տեղում, էջ 145—146:

¹³ Նույն տեղում, էջ 168:

Մինչև իր տառապալի կյանքի վերջին օրերը, գրողն ապրում էր իր ժողովրդի, նրա մշակույթի ու գրականության հոգսերով: Պատասխանելով Սա. Զորյանի հարցաթերթիկին, որով վերջինս դիմել էր հայ նշանավոր գրողներին, խնդրելով հայտնել կարծիքներ հայ գրականության ներկայի, ապագայի և լեզվական խնդիրների մասին, Փափազյանը զարմանալի պայծառատենությամբ ու սթափ հայացքով, քննելով ժամանակի դրականության վիճակը, լուսաշող ապագա է կանխագուշակում նրա գալիքի վերաբերյալ: Դաշնակների տիրապետության ծանր օրերն էին: Ոչ մի հույս չկապելով ներկայի հետ, նա գրում է. «Ներկան ոչինչ չունի ասելու ապագայի հառաչողիմության մասին, մեր քաղաքական նոր կյանքից և մտավոր ապագա միջավայրից է կախված ամեն ինչ... Ապագան հղի է սպասումներով: Դժվար է գուշակություն անել: Մեր մինչև այժմ ունեցած պատկերացումներից բոլորովին պիտի տարբերվի հայ կյանքն ու ըմբռնումները... Սպասենք ուրեմն: Հենու չէ վերագնահատումների, նոր արժեքների և նոր հասկացողությունների ժամանակը»¹⁴:

Իրեն հատուկ խորաթափանցությամբ և անաչառությամբ Փափազյանը կարողացել է այս դեպքում ևս ճիշտ գնահատել իրերի դրությունը և իր բոլոր հույսերը կապել Հայաստանում նոր կարգերի հաստատման հետ:

Գրողի պատասխանը նրա քննադատական մտորումների գեղեցիկ ամփոփումն է: Այստեղ ավելի, քան երբևէ պարզ երևում են հեղինակի խոհերն ու զգացմունքները, մտահոգությունները կապված ժողովրդի կյանքի ու մշակույթի հարցերի հետ, վառ հավատը նրա ապագայի նկատմամբ:

Փափազյան-գրաքննադատը շարունակեց և զարգացրեց հայ ռեալիստական գրականագիտության դեմոկրատական ավանդները: Դրանով էլ որոշվում է նրա քննադատական ժառանգության տեղը հայ հասարակական մտքի պատմության մեջ:

ВРТАНЕС ПАПАЗЯН — ЛИТЕРАТУРНЫЙ КРИТИК

Л. Г. МУРАДЯН

Р е з ю м е

Критическое наследие В. Папазяна представляет большой интерес для исследователей истории армянской общественной мысли XIX века.

Будучи представителем демократического направления армянской реалистической критики, Папазян в своих многочисленных статьях, рецензиях и письмах откликался на жгучие проблемы современности.

Папазян-критика глубоко волновали судьбы новой армянской литературы, особенности ее развития, ее будущее. В статье подробно рассматриваются его взгляды на реализм, народность и общественную роль литературы. Единство этих вопросов, вытекающих из литературоведческих принципов критика, и составляет критерий его оценок.

¹⁴ Նույն տեղում, էջ 244: